



**YEREVAN STATE UNIVERSITY
ENGLISH PHILOLOGY CHAIR**

ARMENIAN ASSOCIATION FOR THE STUDY OF ENGLISH

**LANGUAGE AND LITERATURE IN
THE CONTEMPORARY PARADIGM
OF SCIENTIFIC KNOWLEDGE**

SCIENTIFIC JOURNAL

9

Yerevan
“Lusakn”
2018

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ԱՆԳԼԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

ԼԵԶՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԳԻՏԱԿԱՆ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

9

Երևան
«Լուսակն»
2018

Հանդեսը հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
The Journal is published by the decision of YSU Scientific Council

Գլխավոր խմբագիր՝ Ս. Գասպարյան, բ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ քրթակից անդամ,
ՀՀ Գիտության վաստակավոր գործիչ

Խմբագրական խորհուրդ՝

Ս. Տեր-Մինասովա, բ.գ.դ., պրոֆ.

Ա. Զորջի, բ.գ.դ., պրոֆ.

Ս. Հարությունյան, բ.գ.դ., պրոֆ.

Լ. Մաթևոսյան, բ.գ.դ., պրոֆ.

Ն. Հարությունյան, բ.գ.դ., պրոֆ.

Շ. Պարոնյան, բ.գ.դ., պրոֆ.

Գ. Մուրադյան, բ.գ.դ., դոց.

Գ. Հարությունյան, բ.գ.թ., դոց.

Լ. Կարապետյան, դոց. (պատասխ. քարտուղար)

Գ. Մադոյան, բ.գ.թ.

Editor-in –chief: S. Gasparyan, Doctor of Sciences (Philology), Prof., Corresponding
Member of RA NAS, Honoured Scientist of RA

Editorial Board:

S. Ter-Minasova, Doctor of Sciences (Philology), Prof.

A. Giorgi, Doctor of Philology, Prof.

S. Haroutyunian, Doctor of Philology, Prof.

L. Matevosyan, Doctor of Sciences (Philology), Prof.

Sh. Paronyan, Doctor of Sciences (Philology), Prof.

N. Haroutyunyan, Doctor of Sciences (Philology), Prof.

G. Muradyan, Doctor of Sciences (Philology), Associate Prof.

G. Haroutyunyan, Doctor of Philology, Associate Prof..

L. Karapetyan, Associate Prof. (executive Secretary)

G. Madoyan, Doctor of Philology

Լեզուն եվ գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում:
Գիտ. հանդես. – Եր.: Լուսակն, 2018. - 212 էջ. *Հանդեսը ընդգրկում է բանասիրական գիտելիքի հինգ հիմնական բնագավառ՝ լեզվաբանություն, լեզու. ու մշակույթ, թարգմանաբանություն, գրականագիտություն, նաև դասավանդման մեթոդիկա:*

Language and Literature in the Contemporary Paradigm of Scientific Knowledge.
Scientific Journal. – Yerevan: Lusakn, 2018. - 212 p. *The Journal covers five basic spheres of philological knowledge: Linguistics, Language and Culture, Translation Studies, Literature Studies, as well as Language Methodology.*

© Ս. Գասպարյան, 2018 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԱԾԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԲԵՐԱԿԱՆ ԻՄԱՍՏԸ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ.....	8
<i>Նաիրա Մկրյան</i>	
ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՍՏԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ	15
<i>Աննա Կնյազյան</i>	
ԳԻՏԱՖԱՆԱՍՏԻԿԱՅԻ ՍԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	25
<i>Գայանե Մուրադյան</i>	
ԲՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՄԿԶԲԱՂԱԲՑՈՒՐ.....	32
<i>Ալինա Պետրոսյան</i>	
ԼԱՏԻՆԵՐԵՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՄԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԼԵԶՎՈՒՄ	40
<i>Արմենուհի Մարտիրոսյան, Մարինե Մկրտչյան</i>	
ԳՈՎԱԶԴԻ՝ ՈՐՊԵՍ ՀՈԳԵԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԷԹՆՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	47
<i>Ռուզաննա Առաքելյան, Գոհար Հարությունյան</i>	
ԵԶՐՈՒՅԹԻ ԵՎ ԲԱՌԻ ԳԻՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄՆ ՈՒ ԴԻԱՑ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	54
<i>Հասմիկ Ղաթոյան</i>	
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ՀԻՆԳ ՀՈՒՈՎԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈՒՈՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՃՇԳՐԻՑ ԼԵՐԿԱՅԱՑՆԱՂ ԵՂԱՆԱԿ	63
<i>Աստղիկ Մխիթարյան</i>	
ԽՈՍՔԱՅԻՆ ԼԵՐԳՈՐԾՈՒՄԸ ԱՆԳԼԵՐԵՆ ԱՌՑԱՆՑ ԳՈՎԱԶՂԱՅԻՆ ՄԵԴԻԱՏԵՔՍԵՐՈՒՄ.....	69
<i>Համլետ Առաքելյան</i>	
ՆԱԽԱԾԱՆՑՆԵՐԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՍՏԱԿԱՐԳՈՒՄԸ ԺԱՍՏԱՆԱԿԱԿԻՑ ԻՏԱԼԵՐԵՆՈՒՄ, ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ	76
<i>Մարիամ Գևորգյան</i>	
ԳՈՑԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԲԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ.....	88
<i>Միրարփի Կարապետյան</i>	
ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՏԵՔՍԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	97
<i>Նարե Զորանյան</i>	

ՖԵՆՈՐՁԻ ՈՃԱԺԱՆՐԱՅԻՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԹՈՒՔԻՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	103
<i>Անի Տեր-Պետրոսյան</i>	

THE FUNCTIONAL INTERPRETATION OF OK? IN ACADEMIC DISCOURSE	111
<i>Nare Hakobyan</i>	

ЯЗЫКОВАЯ САМОИДЕНТИФИКАЦИЯ ГОВОРЯЩЕГО	123
<i>Марика Тонян</i>	

ԼԵԶՈՒ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՇՈՏԼԱՆԴԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐԶ	132
<i>Մարիանա Սարգսյան</i>	

ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՈՐՊԵՍ ԼԵԶՈՒ	146
<i>Հասմիկ Մկրտչյան</i>	

COMPARATIVE ANALYSIS OF THE PROVERBS WITH THE CONCEPT WOMAN IN ENGLISH AND ARMENIAN	153
<i>Jemma Militonyan</i>	

ԹԱՐԳՄԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱՎՈՐ Ե ԲԱՆԱՎՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ	164
<i>Նարե Զաբաղյան</i>	

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՄԵՂԱՎՈՐ-ԱՆՄԵՂ ԵՐԿԱՏՈՒՄԸ Զ. ԶՈՅՄԻ «ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՐՎԵՍՍԱԳԵՏԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ» ՎԵՊՈՒՄ	172
<i>Արեգա Համբարձումյան</i>	

НЕКОТОРЫЕ ПСИХОЛОГИЧЕСКИЕ АСПЕКТЫ МАЛОЙ ПРОЗЫ Р.Л. СТИВЕНСОНА	179
<i>Наталья Гончар-Ханджян, Анаит Акопян</i>	

ТЕМА СМЕРТНОЙ КАЗНИ В РОМАНЕ Т.КАПОТЕ ХЛАДНОКРОВНОЕ УБИЙСТВО	188
<i>Наре Мкртчян</i>	

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՈՍԱԶՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵԴԻԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ	200
<i>Մարիամ Առաքելյան</i>	

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՐԱՅՈՒՅՑՈՒՄ

Աննա Կնյազյան

Երևանի պետական համալսարան

Հողվածում լուսաբանվում են լեզվի և գենդերի փոխհարաբերությունների վերաբերյալ ուսումնասիրությունները լեզվաբանության մեջ: Առկա տեսագործնական նյութի քննական վերլուծությունը թույլ է տալիս նկատել, որ գենդերային հայեցակարգի դիտարկման շրջանակներում հիմնական շեշտը դրվում է տղամարդու և կնոջ ոչ թե բնական, կենսաբանական տարբերությունների վրա, որոնք ի սկզբանե կանխատեսված են նրանց ֆիզիոլոգիական յուրահատկություններով, այլ նրանց սոցիալական հետաքրքրությունների, պահանջումների և վարքագծի վրա՝ չանտեսելով նաև գենդերային հատկանիշների սերտ կապը հանրամշակութային յուրահատկությունների հետ: Կարելի է ասել, որ լայն առումով, գենդերը հանրամշակութային կարգ է: Գենդերը յուրահատուկ է նրանով, որ այն ցանկացած հասարակության բնութագրի անբաժանելի մասն է, և ցանկացած հասարակություն այս կամ այլ կերպ կարգավորում է հարաբերությունները սեռերի մեջ:

Բանալի բառեր. լեզու, գենդեր, սոցիալական սեռ, արականություն, իգականություն, տղամարդկանց և կանանց խոսք, հանրամշակույթ:

Ներածություն

Մարդկանց առօրյա կյանքը, կարծրատիպերը, անհատի դերային դիրքորոշումները և գործողությունների գնահատումը մեծապես պայմանավորված են գենդերային փոխհարաբերություններով: *Գենդեր* եզրույթը վերաբերում է հասարակության մեջ տղամարդկանց և կանանց զբաղեցրած դիրքին, նրանցից ակնկալվող վարքի նորմերին, հոգեբանական և սոցիալական առանձնահատկություններին: Այդ իսկ պատճառով այն հաճախ ներկայացվում է որպես «սոցիալական սեռ», քանի որ բացի կենսաբանական սեռից, հասարակական կյանքում առկա են տարաբնույթ կարծրատիպեր և երևույթներ, որոնք վերագրվում են կանանց կամ տղամարդկանց: Գենդերի միջոցով բացահայտում է հանրամշակութային կարծրատիպերի, փոփոխվող դերերի, կարգավիճակների, վարքի տարատեսակ դրսևորումների և զգայական համակարգերի տարբերությունները:

Արևմտյան Եվրոպայում և ԱՄՆ-ում արդեն ավելի քան երկու տասնամյակ հիմնավոր հետազոտության է ենթարկվում գենդերային գործոնի դերը լեզվում: Ռուս գիտական շրջանակներում սեռի հանրամշակութային հասկացույթին առնչվող հարցերի ուսումնասիրությունները մինչև վերջերս ավելի շատ դիպվածային բնույթ էին կրում, սակայն ներկայումս բոլոր հիմքերը կան ասելու, որ գեն-

դերաբանությունը կայացել է լեզվաբանության մեջ որպես ինքնուրույն ուղղություն:

Լեզվի և գենդերի հետազոտությունների լեզվաբանական և հանրամշակութային ավանդույթները

Հանրամշակութային ավանդույթի շրջանակներում լեզուն մեկնաբանվում է առաջին հերթին որպես սոցիալական հարաբերությունների միջնորդ, սոցիալական նույնականություն արտահայտող, մշակութային արժեքները պահպանող միջոց, որն առավել վառ իրականացվում է հանրալեզվաբանության մեջ:

Պատահական չէ, որ տարբեր սոցիալական խմբերում տղամարդկանց և կանանց խոսքային վարքը հետազոտող Ֆ. Մաուտների համոզմամբ՝ գենդերային տարատեսակությունը լեզվում պայմանավորված է սոցիալական խնդիրներով (Mauthner 1921): Այլ կերպ՝ լեզվի զարգացման վրա սոցիալական պայմանների ազդեցությունը դրսևորվում է նաև սեռերի խոսքային ու վարքագծային տարբերություններում:

Հետաքրքրական է, որ արականության և իգականության խոսքային դրսևորումների առաջին դիտարկումները կատարվել են ճանապարհորդների կողմից, սակայն հետագայում այս հիմնախնդրի միջգիտակարգային բնույթը գրավել է գիտական ամենատարբեր ոլորտների հետազոտողների ուշադրությունը (Oakley 1972; Bem 1993 և այլն): Մասնավորապես Կ. Յունգը, արականության և իգականության հասկացությունները կապելով առասպելաբանական մտածողության հետ դրանց մեջ տեսնում է երկու ներհակ նախասկիզբ՝ Անիմուսին և Անիմային (Юнг 1996):

Ընդհանրացման արդյունքում Կ. Յունգը փորձում է տարանջատել արականության և իգականության բնութագրական գծերը: Նրա համոզմամբ՝ եթե տղամարդը պատրաստ է մրցակցության, ապա կնոջը առավել բնորոշ է համագործակցության հակումը, եթե տղամարդը անհամբերության մարմնավորումն է, ապա կինը ջանում է համբերատար լինել: Տղամարդու քննադատական ոգին Կ. Յունգը հակադրում է կնոջը բնորոշ համաձայնողականությանն ու աջակցելու տրամադրությանը: Տղամարդու անկախ, պատվախնդիր, տրամաբանող, բանական ու բռնկուն բնույթին, նրա կարծիքով, հակակշիռ է կնոջ զիջողականությունը, մեղմությունն ու պասիվությունը:

Թեև լեզվաբանության մեջ լեզվի և գենդերի փոխհարաբերություններին առնչվող հետազոտությունները լեզվաբանության մեջ կանոնավոր և հետևողական բնույթ չեն կրել, և *գենդեր* կարգը լեզվի ուսումնասիրության դաշտում հայտնվել է XX դարի 80-ական թվականներին՝ ավելի ուշ, քան այլ գիտություններում, այդուհանդերձ բնական սեռի և քերականական սեռի միջև անվիճելի կապի գաղափարը երկար ժամանակ շրջանառվում էր: Դեռևս անտիկ շրջանից հայտնի բնական սեռերի (*sex*) և քերականական սեռերի (*gender*) կարգային իմաստավորումները, որոնք սերտորեն կապվում էին տարբեր սեռերի մարդկանց գոյության փաստի հետ, ըստ էության սկիզբ էին դրել սեռի (*genus*) կարգի խորհրդանշական-իմաստային ընկալումներին ու մեկնաբանություններին (ըստ Шахмайкин 1996; Ласкова 2001):

Մեռային տարբերությունների խորհրդանշական-իմաստային կանխավարկածի հետևորդները եղան Վ. Ֆոն Հումբոլդտը և ուրիշներ, որոնք զգալի դեր խաղացին սեռային տարբերությունները լեզվաբանական ուսումնասիրության դաշտ տանելով՝ ընդ որում ելակետային էր այն, որ արական սեռը համարվում էր առաջնային՝ շնորհիվ ուժի, ակտիվության, էներգիայի, իսկ իգականը, ընդհակառակը, որակվում էր պասիվությամբ ու ենթակայությամբ (Гумбольдт 1984):

Ինչպես վերը նշվել է, սեռային տարբերությունների հետ կապված լեզվաբանական հետազոտությունների իրականացման համար նախադրյալները շատ հուսալի չէին: Առկա էին միայն Կարիբյան արշիպելագի կղզիների որոշ լեզուներում տղամարդկանց և կանանց խոսքի տարբերությունների վերաբերյալ հատուկենտ նկարագրություններ, իսկ առաջին իրական բացահայտումներն ի հայտ եկան XVII դարում և վերաբերում էին «նախասկզբնական» էկզոտիկ լեզուներին: Դրանք բնութագրական էին նրանով, որ այդ լեզուներում տղամարդկանց և կանանց արտասանության և բառագործածության տարատեսակների բաժանում կար: Գենդերային բազմազանության սակավաթիվ բոլոր նկարագրությունների համար ընդհանուրն այն էր, որ տղամարդկանց լեզուն դիտվում էր որպես բուն լեզու, իսկ կանանցը՝ որպես դրանից շեղում:

Այստեղից էլ այն մեծ ուշադրությունը, որ հատկացվում էր, ոչ թե տղամարդկանց, այլ կանանց լեզվի ուսումնասիրությանը: Հետազոտողների ելակետը տղամարդկանց ու կանանց միջև բնության կողմից կանխորոշված մտավոր կարողությունների տարբերություններն էին և այն համոզմունքը, որ տղամարդկանց ու կանանց խոսքի միջև առկա բոլոր տարբերությունները կենսաբանական սեռով էին պայմանավորված:

Տղամարդկանց ու կանանց խոսքի կիրառության ևս մեկ տարբերություն մատնանշեցին եվրոպացի հետազոտողները՝ այցելելով Հնդկաստանի արևմուտք, որտեղ արական սեռի անձանց հատուկ էր կանանց համար արգելված համարվող բազմաթիվ բառերի ու արտահայտությունների գործածությունը, իսկ տղամարդիկ երբեք չէին գործածում կանանց բառապաշարին պատկանող բառեր:

XX դարի սկզբին լեզվի գենդերային հայեցակերպի ու հաղորդակցության նկատմամբ հետաքրքրությունը փոքր-ինչ մեծացավ, և լեզվաբանության մեջ լեզվի ու սեռի թեման հայտնվեց գիտական առաջնահերթությունների շարքում: Դրան նպաստեցին մի շարք հանգամանքներ. նախ՝ նշյալ հիմնախնդիրը հետաքրքրեց համաշխարհային հռչակ ունեցող լեզվաբանների՝ Է. Մեյրիին, Օ. Յեսպերսենին, Ֆ. Մաուտներին, որոնք XX դարի լեզվաբանության մեջ մի շարք ուղղություններ էին հիմնադրել: Երկրորդ՝ լեզվաբանական նկարագրություններում առաջին տեղ մղվեց հասարակական կյանքը, իսկ լեզուն դիտարկվում էր հասարակության և նրանում ապրող մարդու հետ կապի մեջ: Կարևոր էր նաև այն հանգամանքը, որ հանրալեզվաբանության բնագավառում տղամարդկանց և կանանց խոսքային տարբերակների միջև առկա տարբերությունների ուսումնասիրության որոշակի փորձ էր կուտակվել այսպես կոչված «պարզունակ լեզուների» քննության հենքի վրա, և այժմ այն կիրառվում էր եվրոպական լեզուների՝ զերմաներենի, անգլերենի, ֆրանսերենի հետազոտական ոլորտում:

1913 թ. լույս տեսավ Ֆ. Մաուտների՝ լեզվի քննությանը նվիրված աշխատությունը (Mauthner 1921), որում նա ճանաչում է գենդերային տարբերությունները գերմաներենում՝ դրանք հիմնավորելով սոցիալական ու պատմական պատճառներով: Այսպես, լեզվի գործառնությունը տարբեր սոցիալական ոլորտներում ուսումնասիրելիս Ֆ. Մաուտներին հաջողվել է պարզել, որ, օրինակ, գործարանային բանվորների շրջանում գոեհիկ բառապաշար գործածում էին բացառապես տղամարդիկ, թեև հասարակության ազնվական խավերում տղամարդիկ հայհոյանքների ու գոեհկաբանությունների փոխարեն օգտագործում էին մեղմասություններ, որոնք թույլատրվում էր գործածել նաև կանանց, սակայն այնքան ժամանակ, քանի դեռ դրանց մեղմասությանը բնույթը պահպանվում էր:

Նրա դիտարկմամբ՝ կանայք ավելի հաճախ էին կիրառում նաև օտար ծագման բառեր, ինչը գիտնականը պայմանավորում է կանանց ավելի պակաս կրթված լինելով, քանի որ նրանց համար ավելի դժվար էր մայրենի լեզվում գտնել այդ բառերի համարժեքները: Բացի այդ, միայն տղամարդիկ են ունակ ստեղծագործաբար գործածել լեզուն, իսկ կանայք միայն յուրացնում են այն, ինչ ստեղծված է ուժեղ սեռի կողմից (Mauthner 1921): «Կանանց լեզվի» ծագումը գիտնականը կապում է անտիկ թատրոնի ավանդույթների հետ, որտեղ սկզբնական շրջանում կանանց դերերը կատարում էին տղամարդիկ: Բեմում կանանց հայտնվելուց հետո միայն դրամատուրգիայի տեխնիկայում կատարվեցին փոփոխություններ, և կանանց հնարավորություն ընձեռվեց «հնչեցնելու» նաև լեզվի իրենց տարբերակը: Պատմական մոտեցումը գիտնականին հանգեցրեց այն հետևության, որ հասարակությունն ընդունեց «կանանց լեզուն» այն ժամանակ, երբ նրանց թույլատրվեց ելույթ ունենալ, որը վկայում է լեզվի հանրայնացման վրա սեռերի անհրավաճաճաճար վիճակի ազդեցության մասին: Ավելի վաղ գենդերային բազմազանության հանրային տեսակետները հաշվի չէին առնվում (Mauthner 1921):

1922-ին Օ. Յեսպերսենը ավելի լայն է քննում սեռի ինքնատիպ հատկանիշները լեզվում՝ հիմնվելով Կարիբյան արշիպելագի կղզիներում ապրող հնդկացի տղամարդկանց և կանանց լեզուների մասին տարբեր առաքելությունների ներկայացուցիչների տեղեկությունների վրա: Նրա կարծիքով՝ կանայք գործածում էին տղամարդկանց բառապաշարից տարբերվող բառեր: Ավելին, կանանց առհասարակ արգելված էր անունով դիմել տղամարդկանց: Նրանք ավելի հակված էին մեղմասության և ոչ թե՛ հայհոյախոսության և ավելի պահպանողական էին լեզվի կիրառության հարցում: Օ. Յեսպերսենը ուշադրություն է դարձրել նաև տղամարդկանց ու կանանց խոսքային վարքերի միջև տարբերություններին երկլեզվության պայմաններում: Երկլեզվության դեպքում կանայք մնում են միալեզու, իսկ տղամարդիկ արագ յուրացնում են նոր լեզուն (Jespersen 1998:225-241):

Գիտնականը բնութագրել է տղամարդկանց և կանանց արտասանության տարբերություններն ու յուրահատկությունները անզլերենի և ֆրանսերենի ձևաբանության մեջ, բառապաշարում, շարահյուսական կառույցներում: Թեև Օ.Յեսպերսենը իր ժամանակաշրջանի առումով հնարավորինս լիարժեք մեկնաբանել է գենդերային գործոնի ազդեցությունը խոսքային վարքի վրա, նրա տեսակետները հետագայում կասկածի տակ առնվեցին այն պատճառաբանությամբ, որ նրա եզրահանգումները հիմնվում են սոսկ սեփական սուբյեկտիվ դիտարկումների վրա:

Եվ այսպես, առաջին հիմնարար լեզվաբանական հետազոտությունները գենդերաբանության մեջ նախաձեռնվեցին XX դարի 60-ական թվականներին՝ հանրալեզվաբանության զարգացմանը զուգընթաց, և ուշադրության արժանացան հանրամշակութային գործոնները, որոնք ազդում են խոսքի ու լեզվի ձևավորման վրա: Դրանց շարքում հատկապես առանձնացվեցին խոսողի ու խոսակցի այնպիսի բնութագրեր, ինչպիսիք են՝ տարիքը, սեռը, սոցիալական կարգավիճակը: Մանրակրկիտ հետազոտություն կատարեց Վ. Լաբովը, որը վերլուծեց *-ing* վերջավորության հնչյունաբանական հինգ տարբերակների տեղաբաշխվածությունը Նյու Յորքի տղամարդկանց ու կանանց շրջանում:

Նա հետազոտեց հասարակական կարգավիճակի, ազգության, սեռի, տարիքի և իրադրության գործոնների ազդեցությունը լեզվի վրա (Labov 2006): Մա չափազանց կարևոր հետազոտություն էր, քանի որ հարցվողները միջին խավի ներկայացուցիչներ էին, սովորական քաղաքաբնակներ, որոնք ընտրված էին ըստ սեռի, տարիքի, սոցիալական կարգավիճակի: Յուրաքանչյուր հարցվողի խոսքը վերլուծվում էր տարբեր հանգամանքներում՝ պաշտոնական և ոչ պաշտոնական, ընդ որում՝ հաշվի առնելով միաժամանակ մի քանի գործոն՝ լեզվական, սոցիալական և իրավիճակային: Այս հետազոտությունը գիտական ճանաչում բերեց այն ենթադրությանը, որ սեռը խոսքի վրա ազդող կարևորագույն գործոնն է (Labov 2006):

Վ. Լաբովի հետազոտության կենտրոնում հնչակարգային հայեցակերպն էր, որի շրջանակներում հաստատվեց, որ կանայք նախընտրում են գործածել արտասանության ավելի ընդունված ձևեր, որ տղամարդկանց և կանանց արտասանության տարբերությունների դրսևորման հաճախականությունը անզլերենում զգալիորեն նվազել է նրանց սոցիալական կարգավիճակի և կրթամակարդակի բարձրացմանը զուգահեռ (Labov 1971:188): Համանման արդյունքներ ստացվեցին նաև եվրոպական մի շարք այլ լեզուների նյութի վրա հաղորդակցության գենդերային հայեցակերպի հետազոտության ընթացքում (տես՝ Günthner, Kotthoff 1991): Բացի այդ, Վ. Լաբովը ապացուցեց, որ ցանկացած խոսող լեզուն օգտագործում է փոփոխական ձևով և չի արտասանում բառի միևնույն հնչակարգային տարբերակը դրա կիրառման բոլոր դեպքերում (Labov 1971):

1970-ականներին՝ ֆեմինիստական շարժումով պայմանավորված հետաքրքրության նոր ալիք բարձրացավ կանանց խոսքի նկատմամբ: Մի շարք գիտնականներ պնդում էին, որ կանանց կողմից որոշակի «իգական» ձևերի գործածությունը հասարակության մեջ իրավահավասար դիրքի հասնելու նրանց փորձերի վրա բացասաբար է ազդում: Նման տեսակետ հաճախակի է հանդիպում նաև հետազայում՝ մասնավորապես Ռ. Լակոֆի աշխատություններում, որոնցում գլխավորապես քննության են առնվում լեզվում՝ կնոջ սոցիալական կարգավիճակի արտացոլմանը վերաբերող ընդհանուր հարցեր (Lakoff 1987):

Ըստ Ռ. Լակոֆի՝ եվրոպական լեզուներում կինը, որպես կանոն, ներկայացվում է բացասական լույսի ներքո (բանահյուսությունը դրա լավագույն ապացույցն է): Այստեղ կինը ավելի հաճախ օբյեկտ է, քան սուբյեկտ: Նրա խոսքային վարքն ավելի անվստահ է, քան տղամարդունը, բայց և միաժամանակ մարդասիրական է և պակաս ագրեսիվ (Lakoff 1973:65): Հեղինակի կարծիքով՝ այդ ամենը,

լայն առումով եվրոպական հասարակության մեջ կայունացած կանացիության կարծրատիպի հետևանքն է, որն ընկալվում է որպես մեղմություն, զիջողականություն, հնազանդություն: Եվ, հակառակը, տղամարդկանց ոճով խոսող և գրող կանանց, այսինքն՝ իրենց հուզող թեման քննարկելու վճռականություն ունեցողներին, որոնք բանավոր խոսքում կարող են նաև ընդհատել զրուցակցին, օգտագործել հրամայական ձևեր, Ռ. Լակոֆն ընկալում է որպես անկիրթ և տղամարդակերպ: Այդ իրավիճակը նա անվանում է կին լեզվակիրների «երկակի կախվածության» վիճակ (Lakoff 1973:52):

Հարկ է նշել, որ Ռ. Լակոֆի հետազոտությունը բազմաթիվ վեճերի առիթ դարձավ: Հեղինակին քննադատում էին այն բանի համար, որ նա իր վերլուծությունը հիմնում է սեփական ներըմբռնողության վրա, և կնոջ խոսքի պատճառները փնտրում բացառապես սոցիալական գործոնների մեջ: Տղամարդու խոսքն ընդունվում էր որպես նորմ (Lakoff 1973): Անընդունելի էին համարում այն հանգամանքը, որ Ռ. Լակոֆի ուսումնասիրությունը հետազոտողների ուշադրությունը շեղում էր ինչպես լեզվի ավելի համակարգված ու համալիր քննությունից, այնպես էլ մասնավորապես տղամարդկանց խոսքի կարևորումից: Այդուհանդերձ Ռ. Լակոֆի աշխատությունները կնոջ խոսքի ֆենոմենի շատ հետազոտությունների համար էական դեր կատարեցին:

Ընդհանուր առմամբ, լեզվում գենդերային գործոնի հետազոտման սկզբնական փուլում հետազոտությունների հատվածական բնույթը, լեզվաբանության մեջ ոչ կենտրոնական դիրքեր զբաղեցնելը, տղամարդու և կնոջ լեզուների հարաբերակցության դիտարկումը որպես նորմ և նորմից շեղում, այնուամենայնիվ չխոչընդոտեցին գենդերային հետազոտությունների հետագա զարգացումը: Թեման սկսեց ընդլայնվել և ավելի շատ գրավել լեզվաբանների ավելի մեծ ուշադրությունը՝ նոր տվյալների ի հայտ գալու շնորհիվ, որով պայմանավորվեց մասնագիտական հետաքրքրության աճը գենդերային հետազոտությունների նկատմամբ:

Ժամանակի ընթացքում ձևավորվեց այն հարցադրումը թե արդյոք կարելի է բոլոր լեզուներում գործող որևէ համընդհանուր սկզբունք բացահայտել, որը հիմք կտա խոսակցական լեզուն բաժանելու տղամարդկանց և կանանց տարբերակների, թե սեռի գործոնի ազդեցությունը խոսքի վրա հիմնվում է տվյալ ժողովրդի մշակույթի և հասարակության առանձնահատուկ բնութագրերի վրա: Ուրիշ խոսքով գիտնականները «խոսողի սեռ/ խոսակցի սեռ – լեզվագործածության առանձնահատկություններ» հարաբերակցությունը ճիշտ հասկանալու և որակելու համար գիտնականները սկսեցին համակողմանիություն որոնել՝ փորձելով պարզել, թե արդյոք բոլոր լեզուներում քերականության միևնույն ոլորտներում օգտագործվում են խոսողի և խոսակցի սեռային տարբերություններով պայմանավորված ձևերը, թե՞ գոյություն ունեն օգտագործման հատուկ կանոններ՝ կախված տվյալ լեզվից: Դա պարզելու համար անհրաժեշտ էին տվյալներ տարբեր լեզուներից: Հետազոտությունների համեմատաբար անհետևողական և անկանոն բնույթը, լեզվաբանական հետազոտություններում առաջնահերթությունների մշտափոփոխությունը հանգեցրին այն բանին, որ համակողմանիության մասին հարցը առ այսօր բաց է: Այդուհանդերձ հարցադրումն ինքնին խթանեց որոնում-

ների ակտիվությունը և մեծաքանակ տվյալների կուտակումը, որոնք հետագայում կիրառվեցին նաև այլ լեզուներում:

Ռուս լեզվաբանության մեջ նույնպես գենդերային հետազոտությունների սկիզբը սովորաբար թվագրվում է XX դարի իննսունական թվականների կեսերից: Հենց այդ շրջանում էր, որ ռուսական գիտական գրականության մեջ հայտնվեց *գենդեր* եզրույթը: Ու թեև այդ շրջանում հետազոտությունները համակարգված չէին և չէին հավակնում գիտական ուղղության կարգավիճակի, կապված չէին հանրային կառուցվածքաբանության տեսության հետ, ռուս գիտնականները որոշակի ներդրում ունեցան գենդերային հետազոտությունների հիմնախնդիրը մշակելու հարցում (տե՛ս Кирилина 2000; Халева 2001 և այլն):

Լեզվաբանական գենդերաբանության յուրահատկությունը ռուսական գիտական գրականության մեջ տղամարդու և կնոջ խոսքի հետազոտությունների գործնական ուղղվածությունն է (տե՛ս Жельвис 1989; Горошко 1995 և այլն): Մեծ թվով աշխատություններ կապված են քրեագիտական փորձաքննության պահանջների հետ (տե՛ս Гомон 1990; Потапов 2001): Դրանք կենտրոնացած են տղամարդու և կնոջ խոսքի նույնականացման հատկանիշները հայտնաբերելու և պարզաբանելու վրա: Նմանաբնույթ հետազոտությունների համար առավել կարևոր է հակառակ սեռի անձի խոսքի կեղծակերպումը պարզաբանելու մեթոդիկաների մշակումը: Ակներև է, որ այդ խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է ունենալ տղամարդու և կնոջ խոսքի հստակ ստուգելի հատկանիշներ: Այսպես, ըստ Տ. Վ. Գոմոնի՝ «հակառակ սեռի անձի խոսքի կեղծակերպման փաստի մասին եզրակացության հանգելու համար պետք է պարզել, թե տղամարդու և կնոջ խոսքի սեռային դասակարգման հատկանիշների ո՞ր համալիրն է աչքի զարնոդ, հաճախադեպ և դյուրին նմանակվող, իսկ որ հատկանիշներն են դժվար ընդօրինակելի, որը պայմանավորված է խոսքի ծագման խորքային գործընթացներով և չի կարող քողարկվել» (Гомон 1990:150):

Լեզվական անհատի խոսքի ձևավորման վրա գենդերային յուրահատկությունների ազդեցության հետազոտության ոլորտում առանձնացվում է երեք հիմնական մոտեցում (Горошко 1995): Ընդ որում եթե առաջին մոտեցումը հանգում է կնոջ և տղամարդու լեզվի բացառապես սոցիալական բնույթով պայմանավորված բացատրությանը և նպատակաուղղված է վեր հանելու խոսքային տարրերի՝ սոցիալ-հասարակական դրոշմ կրող իմաստաբանական տարբերությունները, ապա հանրալեզվաբանական մոտեցումը կնոջ և տղամարդու լեզուն գիտականորեն հանգեցնում է նրանց խոսքային վարքի առանձնահատկություններին՝ նշելով նրանց միջին վիճակագրական ցուցանիշների կարևորությունը կնոջ և տղամարդու վարքի հոգելեզվաբանական ուսումնասիրություններում (տե՛ս Крючкова 1975; Веяперт 1976 և այլն): Երրորդ մոտեցման ներկայացուցիչները սեռերի լեզվական վարքում առավելապես շեշտադրում են տարբերությունների ճանաչողական հայեցակերպը: Նրանց համար ավելի կարևոր է ոչ միայն տարբերությունների հաճախականությունը պարզելը, այլև լեզվական կարգերի ամբողջական լեզվաճանաչողական կադապարներ ստեղծելը (տե՛ս Adler 1987; Колосова 1996 և այլն):

XX դարի 60-ական թթ. վերջին – 70-ական թթ. սկզբին գենդերային հետազոտությունները լեզվում ևս մեկ հզոր խթան ստացան, երբ ԱՄՆ-ում և Գերմանիայում այսպես կոչված «Կանանց նոր շարժման» շնորհիվ, լեզվագիտության մեջ ծնունդ առավ ինքնատիպ մի ուղղություն, որը կոչվեց ֆեմինիստական լեզվաբանություն: Ֆեմինիստական լեզվաբանության գլխավոր նպատակը հայրիշխանության՝ հասարակական և մշակութային կյանքում տղամարդկանց գերիշխանության շեշտադրումն էր (Borneman 1991; Janssen-Jurreit 1982):

Մարդու ձևավորման մեջ կարևորելով բազմաթիվ գործոնների ազդեցությունը (Էթնիկ, ցեղային պատկանելության, կրոնի, տարիքի, սեռի, մասնագիտության և այլն)՝ Դ. Տաննենը համոզված է, որ դրանք միախառնվելով յուրաքանչյուր անհատի անհատականության և նախասիրությունների հետ, անպայմանորեն դրսևորվում են նրա խոսքում: Խոսակցական ոճերում առկա սեռային պատկանելությանը պայմանավորված յուրահատկությունները, ըստ նրա, լուրջ հետազոտություն են պահանջում (Tannen 1992):

Եզրակացություն

Այսօրինակ աշխատությունների շարքին են դասվում նաև միջմշակութային և լեզվամշակութաբանական հետազոտությունները, սակայն այս բնագավառներում գենդերի հիմնախնդիրը դեռևս բավարար մշակվածության չի հասել: Այդուհանդերձ, արդեն իսկ հետազոտված նյութի հիման վրա կարելի է արձանագրել, որ լեզվի անվանական համակարգը միանման չի սահմանում *արականություն* և *իգականություն* հասկացությունները միանման չի սահմանում և նույնանման նշանակություն չի տալիս դրանց: Տղամարդկանց և կանանց խոսքային վարքը կարող է տարբերվել՝ պայմանավորված համապատասխան մշակույթի նորմերով:

Գենդեր հասկացության տեսական հայեցակերպը լուսաբանող այս բազմաձևավալ նյութի համակողմանի ուսումնասիրությունը, թույլ է տալիս վեր հանել հարցի հետազոտ քննության տարաբնույթ մոտեցումներ ու մեթոդներ և բերում է մեզ այն համոզման, որ այս հարցի քննության մեթոդաբանորեն ճիշտ և հիմնավորված ուղին անցնում է միջգիտակարգայնության դաշտով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Adler, M.K. (1987) *Sex Differences in Human Speech. A Sociolinguistic Study.* Hamburg: Hamburg University Press, 254 p.
2. Bem, S. L. (1993) *The Lenses of Gender: Transforming the Debate on Sexual Inequality.* New Haven, CT: Yale University Press, 244 p.
3. Janssen-Jurreit, M. (1982) *Sexism: the Male Monopoly of History and Thought.* London: Pluto Press, p. 376.
4. Jespersen, O. (1998) *The Woman. // The Feminist Critique of Language: A Reader* Routledge: London, New York, pp. 225-241.
5. Günthner, S.; Kotthoff, H.; Von Fremden, S. (1998) Weibliches und männliches Sprechen im Kulturvergleich. in: Susanne Günthner and Helga Kotthoff (Hrsg.): Von

- fremden Stimmen: Weibliches und männliches Sprechen im Kulturvergleich. Frankfurt am Main: Suhrkamp, s. 7-50.
6. Labov, W. (1971) *Variation in Language*. // The Learning of Language. National Council of Teachers of English. / Ed. by C.E. Reed. New York, pp. 187-221.
 7. Labov, W. (2006) *The Social Stratification of English In New York City*. Cambridge: CUP, 498 p.
 8. Lakoff, R. (1973) *Language and Women's Place*. // Language in Society. Cambridge: CUP, N 2. pp. 45-79.
 9. Mauthner, F. (1921) *Beiträge zu einer Kritik der Sprache*. // Zur Sprache und Psychologie 3, Band 1. Auflage, Stuttgart und Berlin, 719 s.
 10. Oakley, A. (1972) *Sex, Gender and Society*. London: Temple Smith, 225p.
 11. Tannen, D. (1992) *You Just Don't Understand: Women and Men in Conversation*. Great Britain: Clays Ltd, 319 p.
 12. Вейлерт, А.А. (1976) *О зависимости количественных показателей языка от пола говорящего лица*. // Вопросы языкознания, №5, с.138-143.
 13. Гомон, Т.В. (1990) *Исследование документов с деформированной внутренней структурой*. Дисс. ... кандидата юридических наук. М., 182 с.
 14. Горошко, Е.И. (1995) *Проблемы изучения особенностей мужского и женского стиля речи*. // Человек говорящий: язык, познание, культура. / Под ред. А.А. Романова. Москва – Тверь: Ин-т языкознания АН СССР, с. 25-36.
 15. Гумбольдт, В. фон (1984) *Избранные труды по языкознанию (пер. с нем.)*. М.: Прогресс, 397 с.
 16. Жельвис, В.И. (1989) *Инвектива: мужское и женское предпочтения*. // Этнические и культурные стереотипы социального поведения. Л.: СПб., Наука, с. 266-283.
 17. Крючкова, Т.В. (1975) *Некоторые экспериментальные исследования особенностей использования русского языка мужчиной и женщиной*. // Проблемы психолингвистики. М.: Ин-т языкознания АН СССР, с.186-200.
 18. Кирилина, А.В. (1999) *Гендер: Лингвистические аспекты*. М.: Изд-во Институт социологии РАН, 189 с.
 19. Ласкова, М.В. (2001) *Грамматическая категория рода в аспекте гендерной лингвистики*. Дис. ... канд. филол.наук. Ростов-на-Дону, 302 с.
 20. Потапов, В.В. (2001) *К опыту пересмотра гендерного признака в лингвистике (на материале английского языка)*. // Гендер: Язык, Культура, Коммуникация: Докл. Первой международной конф., Мос. 25–26 ноября 1999г. М., с. 289-302.
 21. Халеева, И.И. (2001) *Гендер в теории и практике обучения межъязыковой коммуникации*. // Доклады Первой Международной конференции. "Гендер: язык, культура, коммуникация". М., с. 7-11.
 22. Шахмайкин, А.М. (1996) *Проблема лингвистического статуса категории рода*. // Актуальные проблемы современной русистики. Диахрония и синхрония. М.: МГУ, с. 226-273.
 23. Юнг, К.Г. (1996) *Душа и миф: шесть архетипов*. Киев: Государственная библиотека литературы для юношества, 384 с.

Гендерные исследования в современной лингвистической парадигме

В статье представлен обзор теоретических проблем, где рассматривается становление гендерной лингвистики в контексте общего развития науки о языке. В ней отражены разнообразные подходы к изучению проблем гендера, представлен ряд теорий из области гендерных исследований, рассмотрены различные подходы к пониманию гендера. Освещение данных проблем опирается на теоретические работы различных ученых, так как в последние годы термин “гендер” обсуждается в научных и общественных кругах более широко. Гендер, гендерные отношения, гендерная культура присутствуют в современных процессах конструирования общества и общественных отношений. Таким образом, исследование гендерных различий становится более актуальным, поскольку гендерное равенство является неременным условием для развития всех сторон общественной жизни.

Gender Studies in the Modern Linguistic Paradigm

The article provides an overview of various approaches to the understanding and study of gender and language. It presents a number of theories from the field of gender studies, examines various approaches to understanding gender. The coverage of these problems rests on the theoretical work of various scientists as in recent years, the term “gender” is widely discussed in scientific and social circles. Gender, gender relations, gender culture are present in contemporary processes of constructing society and social relations. Thus, the study of gender differences is becoming increasingly important because gender equality is a precondition for the development of all aspects of social life.

Մեր հեղինակները

Ալինա Պետրոսյան – ԵՊԲՀ օտար լեզուների ամբիոնի դասախոս, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ alina.petrosyan@yahoo.com

Անահիտ Հակոբյան – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝
anahit.hakobyan1988@yandex.ru

Անի Տեր-Պետրոսյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ aniterpetrosyan@ysu.am

Աննա Կնյազյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.դ.
Էլ. հասցե՝ annaknyazyan@ysu.am

Աստղիկ Մխիթարյան – Վաղարշապատի Մ.Գորկու անվան հ.5 ավագ դպրոցի ուսուցչուհի
Էլ. հասցե՝ asto7@rambler.ru

Արեգա Համբարձումյան – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ orbisenglish@gmail.com

Արմենուհի Մարտիրոսյան – ԵՊՀ դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի ասիստենտ
Էլ. հասցե՝ arm.martirosyan@ysu.am

Գայանե Մուրադյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.դ.
Էլ. հասցե՝ g.murad@ysu.am

Գոհար Հարությունյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ goharharutyunyan@ysu.am

Համլետ Առաքելյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ hamlet.araqelyan@gmail.com

Հասմիկ Ղաջոյան – ՀԱՊՀ օտար լեզուների ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ hasmikghajoyan@mail.ru

Հասմիկ Մկրտչյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ hasmikmkrtyan@ysu.am

Մարիամ Առաքելյան – ՀՊՄՀ օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ
Էլ. հասցե՝ mariamarakelyan89@mail.ru

Մարիամ Գևորգյան – ԵՊԼՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ miriamgevorgian@gmail.com

Մարիանա Սարգսյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ marianasargsyan@ysu.am

Մարիկա Տոնյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ marikatonyan@ysu.am

Մարինե Մկրտչյան – ԵՊՀ դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ m.mkrtyan@ysu.am

Նաիրա Մկրտչյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ nairamkryan@ysu.am

Նատալյա Գոնչար-Խանջյան – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ natalie.goncharkhanjyan@ysu.am

Նարե Հակոբյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ narekaytser@gmail.com

Նարե Մկրտչյան – Հայ-Ռուսական (Մլավոնական) համալսարանի արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ mkrtchyan.nare@gmail.com

Նարե Չոբանյան – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ nare.chobanyan@gmail.com

Նարե Ջաբաղյան – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ narejabaghyan@ysu.am

Ջեմմա Միլիտոնյան – ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի անգլերեն լեզվի և գականության ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ jemmamilitonyan@yandex.com

Ռուզաննա Առաքելյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, Բ.գ.թ.
Էլ. հասցե՝ ruzanna.arakelyan@ysu.am

Միրարփի Կարապետյան – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դասախոս, Բ.գ.թ.
Էլ. հասցե՝ sirarpikarapetyan@ysu.am

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում» գիտական հանդեսը լույս է տեսնում տարին մեկ անգամ: Հանդեսում տպագրվելու համար կարող են ներկայացվել հոդվածներ հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով **Sylfaen** տառատեսակով, լուսանցքները՝ 2 սմ, վերնագիրը՝ 14 տառաչափով (աջ կողմում, գլխատառերով, թավատառ), հիմնական տեքստը և ենթավերնագրերը (ձախ կողմում, թավատառ), հեղինակի անուն, ազգանունը (աջ կողմում, թավատառ), աշխատավայրը (աջ կողմում, շեղատառ)՝ 12 տառաչափով, բոլոր տողերի միջև տարածությունը՝ 1.5: Հոդվածին անհրաժեշտ է կցել հայերեն, անգլերեն և ռուսերեն ամփոփագրեր՝ 60-80 բառի սահմաններում, 7-10 բանալի բառեր (հիմնական տեքստի լեզվով), հեղինակի մասին համառոտ տեղեկություն՝ աշխատավայր, կոչում, պաշտոն, էլ. հասցե, հեռախոսահամար (հայերեն):

- Տեքստը բաժանել հետևյալ մասերի՝ ներածություն, ենթաբաժիններ և եզրակացություն:
- Այլ հեղինակների մեջբերումները՝ չակերտների մեջ, որպես տեքստի շարունակություն /եթե կարճ է/ կամ նոր տողից /եթե երկար է/:
- Այլ հեղինակների աշխատությունների վերնագրերը՝ չակերտների մեջ:
- Փաստացի օրինակները՝ շեղատառ, առանց չակերտների: Եթե օրինակները ներկայանում են մեկից ավելի նախադասություններով, առանձնացնել տեքստից՝ վերևում և ներքևում թողնելով մեկական տարածություն: Օրինակի մեջ ուշադրության արժանի բառերը կամ բառախմբերը ներկայացնել թավատառ:
- Տեքստում աղբյուրը ներկայացնել հետևյալ ձևով՝ փակագծերում տալ հեղինակի ազգանունը և հրատարակչության տարեթիվը: Եթե մատնանշվում է էջը՝ տարեթվից հետո դնել հայկական վերջակետ, նշել էջը: Օրինակ՝ (Svartvik 2005) կամ (Bronfen 1992:330):
- Ծանոթագրությունները՝ հոդվածի վերջում, գրականության ցանկից առաջ:
- Գրականության ցանկը ներկայացնել **այբբենական կարգով**՝ խստիվ հետևելով ներքոնշյալ կանոններին՝
հեղինակի ազգանունը, անվանատառերը, (հրատարակման թվականը), աշխատանքի վերնագիրը (շեղատառերով, առանց չակերտների), հրատարակման վայրը, հրատարակչությունը, հայկական վերջակետ:

Օրինակներ՝

- 1.Ջահուկյան, Գ.Բ. (2003) *Շարահյուսական ուսումնասիրություններ*. Երևան: Ստոդիկ հրատարակչություն:
- 2.Eisenstein, E.L. (1979) *The Printing Press as an Agent of Change*. Cambridge: CUP.
- 3.Myer, T. (1997) *The Language of Science*. Available at: <<http://www.sfsite.com>> [Accessed June 2012]
- 4.Redbury, M. (2003) *Language and Discourse*. // Investigations in Linguistics. / Ed. by R.K. Smith. New York: Redgate Inc.
- 5.Svartvik, J. (2005) *A Life in Linguistics*. // The European English Messenger. / Ed. by J.A. Stotesbury. Vol.14 (1). Portugal: Grafica de Coimbra.
- 6.(1998) *Oxford Advanced Learner's Dictionary of Current English*. Oxford: OUP.

- Հոդվածի էլեկտրոնային տարբերակը ուղարկել afajournal@ysu.am էլ. հասցեին:

Հասցե՝ ՀՀ, Երևան-0025, Ալեք Մանուկյան 1,
Երևանի պետական համալսարան
Հեռախոս՝ (+374 60) 710 546
Էլ. հասցե՝ sedagasparyan@ysu.am, afajournal@ysu.am

«ԳԵՎՈՐԳ - ԳՐԱՅՐ» ՍՊԸ



Հրատարակչություն
Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:
Հեռ.՝ (011) - 52.79.74, 055-52.79.74
Էլ. փոստ lusakn@rambler.ru